ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց պատմություն

ԹԵՄԱ՝

Ակտիվ և նորարական ուսուցումը պատմության դասավանդման գործընթացում

Կազմեց՝ Անի Կարենի Առաքելյան

(անուն, ազգանուն, հայրանուն)

Կապանի թիվ 2 ավագ դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լիլիթ Առաքելյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան…….....2-4

Գլուխ 1. Ակտիվ ուսուցում և մեթոդներ. . . . . .……5-8

Գլուխ 2. Պատմության ուսուցման նորարական

հնարամտությունը ……. . 9-12

Գլուխ 3 Պատմության ուսուցման մի քանի ռազմավարական հնարները

և դրանց կիրառությունը----------13-20

Գլուխ 4 Հարցում աշակերտներին դասի ակտիվ ու նորարական

մեթոդների և հնարների

վերաբերյալ. . . . . .

. 21

Եզրակացություն…….. 22

Հավելված……. 23-30

Օգտագործված գրականության ցանկ……31

Նախաբան

<<Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը:>>

Բ.Ֆ.ՍՔԻՆԵՐ

Այս հետազոտական աշխատանքի ընթացքում ուսումնասիրվել են պատմության ուսուցման համար անհրաժեշտ մի շարք արդյունավետ մեթոդներ,որոնք բազմիցս կիրառվել են պատմության դասաժամերին,տարբեր դասարաններում և աշակերտների շրջանում առաջացրել են ուսումնատենչություն և հետաքրքրություն պատմություն առարկայի նկատմամբ:Մարդկային գործի ամենապատասխանատու շղթայում ուսուցիչը իր առաքելությունը կատարված է համարում այն ժամանակ,երբ իր կիրառած բազմազան հնարների արդյունքում կարողանում է ձևավորել առողջ հասարակության արժանավոր անհատին՝ մարդուն:

Ուսումնական բնագավառը ասես շինհրապարակ լինի,որտեղ աշակերտները նման են <<անփորձ վարպետների>> այսինքն ունեն հրաշք մի քաղաքի հատակագիծ,սակայն չեն կարողանում հասկանալ որտեղից սկսել աշխատանքը, իսկ կրթական բնագավառում առկա կայուն,նորացվող առարկաները նման են չօգտագործված շինարարական հումքի,որից օգտվելու,ճիշտ շինարարություն կազմակերպելու համար անհրաժեշտ է կիրառման արդյունավետ և ճիշտ հնարներ: Հնարները, մեթոդները,դառնում են արդյունավետ,երբ կիրառվում են ճիշտ,որի կիրառմանը ներգրավվում է աշակերտը որպես գործող անձ,այլ ոչ թե որպես դիտորդ:Աշակերտը

որքան շաղախվում է ուսումնավարության ողջ գործընթացին՝ այսինքն,ոչ միայն լսում է ուսուցչի մատուցած դասը,այլ ինքն էլ դառնում է մատուցվող դասի մասնակիցը,ապա նյութը ընկալվում է էլ ավելի դյուրին, ավելի յուրավցած և էլ ավելի ոգևորող:

՝Աշխատանքի մեկ ժամն ավելի շատ բան է սովորեցնում, քան բացատրությունների մեկ օրը, քանզի եթե ես երեխային զբաղեցնում եմ արհեստանոցում՝ նրա ձեռքերն աշխատում են հօգուտ նրա խելքի, նա դառնում է փիլիսոփա՝ իրեն համարելով սոսկ արհեստավոր:՞

Ժան-Ժակ Ռուսո

Հասարակության նյութական հիմքերի զարգացումից կախված, գաղափարախոսության զարգացման հետ միասին, փոփոխվում են նաև ուսուցումն ու դաստիարակությունը, նրա նպատակները, բովանդակությունն ու մեթոդները: Ուսուցումը դպրոցում նպատակ ունի զինել սովորողներին գիտելիքներով,կարողություններով և հմտություններով: Մանկավարժությունը մի գիտություն է, որով լուծվում է դաստիարակության պրոցեսների կառավարման բարդ հարցերը,նա անպտուղ է՝ առանց մանկավարժական մեթոդիկայի և տեխնիկայի: Ուսուցման մեթոդներ ասելով հասկանում ենք ուսուցչի և աշակերտների փոխադարձաբար կապված գործունեության եղանակները,որոնք ուղղված են ուսուցման խնդիրների լուծմանը: Ինչպես գիտենք, արդի կրթական չափորոշիչները սահմանում են նոր կարողունակությունների համակարգ թե' սովորողների, թե' դասավանդողների համար: Նորագույն կրթական տեխնոլոգիաների ներդրումը դպրոցում իր հետ բերել է բազմաթիվ հրամայականներ, և կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով արդիականացվում է, ընդ որում՝ ոչ միայն դասավանդողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով, այլև գնալով փոխվում է նաև սովորողի դերակատարումը: Բարեփոխումների ֆոնին՝ վերարժեվորվել են նաև բոլոր ուսումնական առարկաների դասավանդման նպատակներն ու վերջնարդյունքները: Անհերքելի փաստ է, որ պատմության ուսումնասիրությունն ընդլայնում է սովորողի աշխարհայացքը, նպաստում հաղորդակցման և հանրամշակույթային կարողությունների ձևավորմանը:

Ակնհայտ է, որ Հայոց պատմության առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքին հասնելու գործընթացը պահանջում է երկարատև ու համակարգված աշխատանք, որտեղ կարևոր են և' սովորողի նախաձեռնողականությունն ու մոտիվացիան, և' ուսուցչի մասնագիտական

որակները: Վերը նշած համագործակցության կայացման և ցանկալի վերջնարդյունքի հաստատմանը մեծապես կարող է օգնել կրթական համակարգի արդիականացումը: Ավանդական մոդելով պլանավորված դասն այլևս չի կարողանում բավարարել նոր մտածողություն ու կրթական կարիքներ ունեցող սովորողների կրթական պահանջմունքները, ուստի հարկավոր է մեծապես վերանայել դասի պլանավորման գործընթացը: Մեր մանկավարժական գործունեության փորձին հղում անելով՝ կարող ենք փաստել, որ ինտերակտիվ տեխնոլոգիաների ներդրումը , ՏՀՏ բաղադրիչի կիրառումը դասի ժամանակ ավելի արդյունավետ ու արգասաբեր կարող են դարձնել բուն ուսուցման գործընթացը: Այսպիսով, կարող ենք փաստել, որ նորարարություններով պայմանավորված կրթական բարենպաստ միջավայրի ապահովումը սովորողի համար ստեղծում է անհրաժեշտ ազդակներ, որպեսզի դասապրոցեսը դիտարկվի ոչ թե հարկադրանք, այլ սեփական հետաքրքրությունները, գաղափարներն ու ներուժը համակարգելու ու տեսանելի արդյունք ստանալու հարթակ: Սակայն այս ամենին զուգահեռ յուրաքանչյուր առարկա ունի իր մատուցման,ուսուցման մեթոդաբանությունը,իսկ մեթոդն էլ ավելի արդյունավետ է դառնում այն ժամանակ,երբ ուսուցիչը գիտակցաբար և ճիշտ է կիրառում այն:Հաճախ նոր,ժամանակակից և առաջին հայացքից արդյունավետ և ոգևորող թվացող մեթոդները իչիք են դարձնում ուսուցչի ակնկալիքները,քանի որ ուսուցիչը ուսումնասիրել էր միայն մեթոդը,վերջինիս թույլ և ուժեղ կողմերը,սակայն այն կիրառել էր,ոչ ճիշտ դասարանում կամ ոչ ճիշտ դասաժամին:

Գլուխ 1

Ակտիվ ուսուցում և մեթոդներ

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: Օրինակ, կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ.[1]

- Համախմբել դասախոսության ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները,
- Կատարելագործել արդեն ձեռք բերած մասնագիտական հմտությունները,
- Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ սովորողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և սովորողների միջև, այնպես էլ իրենց, սովորողների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է սովորողների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական

[1] Балаев А.А. Активные методы обучения. М., 2006.

գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել իրենց կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքիր նյութերի ցուցադրություններ:

Մարդը շրջապատող միջավայրը ընկալում է իր 5 զգայարաններով: Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը: Մարդու կարողությունները չափազանց սահմանափակվում են այդ զգայարանի բացակայության դեպքում: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացներում կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը: Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներկայացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ, աչքերին՝ թողնելով առավել էական առարկաներն ու երևույթները: Տեսողականացման տակ մենք հասկանում ենք տեղեկատվության կամ ուսումնական բովանդակության պատկերազարդումը ակներև պատկերների միջոցով: Հետևաբար տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց: Պատկերազարդման այլ հնարավորություններ են մոդելների ներկայացումը, գործընթացի ցուցադրումը, առարկաների գործածումը:

Ցուցադրությունը (դեմոնստրացիա) ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևով ծանոթացնելն է: Պատկերազարդումը (իլյուստրացիա) ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով: Այս մեթոդի անվանման հիմքը անգլ. *action- փոխազդեցություն* բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս: Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ:

Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է: Մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները մենք անվանում ենք խմբային: Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկ այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման

պայմաններում աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ: ԵՎ կրթական գործընթացում ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ: Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում: Այսպիսով, երբեմն ԱՈՒՄ հասկացությունը ընդարձակում են՝ դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն: Կոնկրետացնելով, դրանք ամբողջական կրթական միջոցառման, կամ էլ առարկայական ցիկլի կազմակերպման ձևեր են, չնայած, իհարկե, այդ ուսուցման ձևերի սկզբունքները կարող են օգտագործվել դասի առանձին մասերը անցկացնելու համար:[2]

Ակտիվ ուսուցման մեթոդները – մեթոդներ են, որոնք նպաստում են ուսանողների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: ԱՈՒՄ-ը բնութագրվում է սովորողների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: ԱՈՒՄ-ը – մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են սովորողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը: ՈՒԱՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, սովորողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: ՈՒԱՄ-ի կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը

[2] https://hy.wikipedia.org/wiki Ուսուցման ակտիվ մեթոդներ

և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Ուսանողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Ուսանողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ: Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը՝ ժողովրդավարական ոճով:

Գլուխ 2

Պատմության ուսուցման նորարական հնարամտությունը

՝Ամեն մի անհատ,մի դասակարգ կամ մի ազգ գիտակցում

և ըմբռնում է պատմության ամբողջությունը այնքան,ինքան

այդ պատմությունը անբաժանելի մաս է կազմում իր ներքին զար-

գացման հետ…Դեպքերի վրայ կարելի է նոյնպես ազդել՝ բացատ-

րելով նրանց: ՝Կոստան Զարյան

<<Ի՞նչ փոխհարաբերություն կա մարդկային հասարակությունունների <<ապրված>>, <<բնական>>, եթե չասենք՝ <<օբյեկտիվ>> ,պատմության և այդ պատմությունը նկարագրելու,բացատրելու և դրա շուրջ մտածելու գիտական փորձի միջև՝ :Իսկ ի՞նչ փոխհարաբերություն կա այդ՝ապրված՝ պատմության,դրա ուսումնասիրության, բացատրության և ուսուցման միջև:Առհասարակ՝ ինչու՞ պետք է դպրոցում պատմություն ուսումնասիրել և ի՞նչ է տալիս պատմության ուսումնասիրությունն ու իմացությունը հասարակությունը:[3]

Հաճախ սովորողների պասիվ ներկայություն պահանջող,որևէ նպատակով կարևոր համարվող տարեթվերի և իրադարձությունների պատմության ուսուցումը՝ որպես՝ապրված՝ պատմությունը ճշգրիտ վերստեղծելու և դրա միջոցով սեփական իրականությունը պահպանելու կամ ճշգրտելու քայլ, անցյալ դարի 60-ականներից սկսեց աստիճանաբար փոխվել:Այս փոփոխության հիմքում

[3] Գիրք պատմության ուսուցման,<<Պարադիգմա>> կ/հ 2020թ./:

աշակերտների ՝անխոս պահանջն էր՝,որը ցուցադրվում էր յուրաքանչյուր դասաժամին ներկայանալով թերի և բացահայտ անտարբեր վերաբերմունքով:Սովորողներ շրջանում կատարված հարյուրավոր հետազոտությունները ցույց էին տալիս,որ միայն տարեթվերի և իրադարձությունների պատմության ուսուցումը հաճախ պատճառ էր դառնում պատմություն առարկայից երես թեքելու:Այս գործընթացը նմանվում էր կերակուրը առանց եփելու և համեմելու մատուցելուն,այսինքն մատուցվող գիտելիքը մնում էր ափսեի մեջ,իսկ աշակերտը այն միայն վերցնում էր դիտում,փորձում անգիր հիշել

նրա կարևորագույն հատկանիշները,բայց քանի որ այն չէր գրգռել աշակերտի քիմքը հաջորդ վայրկյանին մոռանում էր թե առարկան,թե վերջինիս բովանդակությունը:Սովորողները զուտ թվաբանությամբ և իրադարձությամբ մատուցված պատմությունը դժվարանում էին մտապահել և առհասարակ դրա վերաբերյալ որևէ դատողություն անել: Հետևաբար պատմության ուսուցման միջոցով սեփական ինքնությունը պահպանելու նպատակն իրականացվում էր մասնակիորեն,իսկ ՝բնական՝,՝ապրված՝ պատմությունը դպրոցներում ՝մահանում՝ էր:

Պատմության ուսուցման վերաբերյալ հետազոտությունների իրականացումը,ի թիվս այլ հանգամանքների նպաստեցին ՝պատմական ակտիվ մտածողության՝ տեսության առաջացմանը և դպրոցներում դրա գործնական կիրառմանը:Եվ ինչպես բոլոր նորն ու առաջավորը,այս նորամուծությունը նույնպես բախվեց կարծրատիպերի և ավանդական ՝ճշմարտությունների՝:Սակայն ժամանակի ընթացքում նորարարության կիրառումը,վերջինիս արդյունավետությունը սահուն առաջ եկավ և ետ մղեց ավանդականին և չոր պատմության մատուցմանը:Այս նոր մեթոդների կիրառությունը նպաստեց ոչ միայն աշակերտների մոտ գիտելիքի ձեռք բերման դյուրին գործընթացին և ընկալմանը,այլ նաև նպաստեց ուսուցիչների մատուցման որակին և արդյունավետությանը:Փոխվեց ուսուցիչների վերջնարդյունքների կաղապարը և ստանդարտ պատմող,անգիր հիշող աշակերտը փոխարինվեց վերլուծող,կարծիքներ առաջարկող,նոր գաղափարներ առաջ քաշող,քննադատող, ուսուցչի հետ հավասար նժարին կանգնած վիճող և վիճարկող անհատի:Արդյունքում պատմության ուսուցումը վերափոխվում է որպես ակտիվ մտածողական գործընթացի:Հետազոտական իր գործընթացում այս գաղափարին է հանգել նաև պատմության փորձառու ուսուցիչ,պատմական գիտությունների թեկնածու Զոհրաբ Գևորգյանը,ով իր այս գաղափարը արտահայտել է իր գրքի ՝Ինչպե՞ս պատմություն ուսուցանել

՝կոշիկի՝ միջոցով՝ բաժնում,որտեղ ենթադրենք՝ դասավանդողը դասի ընթացքում դիտարկում է Արենիի քարանձավից գտնված հինավուրց կոշիկը,որի միջոցով պետք է պարզել՝ արդյոք Արենիի շրջանում ապրող մարդիկ նստակյա՞ց կենսագործունեություն են վարել,թե՞ քոչվորներ են եղել:Ինչպե՞ս կարելի է պատկերել այդ կոշիկի պատրաստման ժամանակաշրջանի որոշակի համատեքստը: [4] Փորձենք կիրառել մի քանի հարցադրում.

1/Ի՞նչ նյութերից է պատրաստված կոշիկը:

2/Հաշվի առնելով կոշիկի պատրաստման նյութերի տեսլականին /կաշի, թելեր, մետաղյա կամ այլ նյութերից պատրաստված ասեղ, որով կարվել է կոշիկը, և այլն/՝ ինչ մասնագիտություններ կառանձնացնեք այդ ժամանակների համար:

Նմանատիպ հարցերը կարելի է շարունակել, ու մտագրոհի, քննարկումների միջոցով սովորողները կբացահայտեն, որ հազարավոր տարիներ առաջ Արենիի շրջակայքում ապրել են կոշկագործներ և անասնապահներ,որոնք մատակարարել են այդ կաշին, թել մանողներ և այդ թելի հումք ապահովող այլ մասնագիտությունների տեր մարդիկ և վերջապես՝ կոշկակարներ:Ի վերջո, ստացվում է, որ եթե միջավայրում կային հողագործներ /Արենիի քարանձավում գտնվել են նաև խաղողի մշակության,գինու պատրաստման հնագույն վկայություններ / , անասնապահներ,ընդհանրապես՝ մասնագիտությունների մի ամբողջ գունապնակ,հետևաբար ակնհայտ է դառնում,որ մարդիկ այս բնակավայրում վարել են առավելապես նստակյաց կենսագործունեություն:Արդյունքում ստացվում է, որ աշակերտը իր կատարած վերլուծությունների արդյունքում բացահայտում է դարաշրջանը իր ողջ բովանդակությամբ,այսինքն անգիր պատմող աշակերտից հմուտ, նոր ու բովանդակալից մեթոդների կիրառմանը տիապետող ուսուցիչը ստանում է վերլուծող հնէաբան աշակերտ:

---

[4] Գիրք պատմության ուսուցման,՝Պարադիգմա՝/հ 2020թ./: ՝<<Ինչպե՞ս պատմություն ուսուցանել <<կոշիկի>> միջոցով՝>>Զոհրաբ Գևորգյան

Մտագրոհի այս եղանակը կիրառեցի 10-րդ դասարանի հայոց պատմության դասին,երբ որպես լրացուցիչ նյութ ուսումնասիրում էինք Հայաստանում հայտնաբերված ավենահին կոշիկի վերաբերյալ նյութը: Աշակերտները, մեծ ոգևորությամբ սկսեցին իրականացնել հետազոտական,պատմական մտովի արշավ և կատարեցին շատ ճիշտ ու բավականին ակտիվ և հմուտ վերլուծություն:Աշակերտները կարծես մի պահ իրենց զգացին ուսուցիչ,վերլուծաբան,ինչն էլ ավելի ոգևորեց վերջիններիս և նրանց մոտ բարձրաձավ առարկայի հանդեպ հետաքրքրությունը:

*Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա՝նա ձևավորում է մարդուն:**Միխայիլ Կալինին***

Այսինքն իր գործում պատասխանատու վարքագիծ դրսևորող ուսուցիչը կարողանում է կերտել, մարդ, մասնագետ,վերլուծաբան, քաղաքացի:Կարևոր է,որ դասավանդողները ուսումնական ռազմավարությունները կիրառեն ժամանակի արդյունավետ կառավարմամբ/որոշեն,թե որքան ժամանակ են տրամադրելու այս կամ այն ռազմավարությանը/,քանի որ յուրաքանչյուր դասարան կամ սովորող կարող են անհատական մոտեցում պահանջել:Այս ռազմավարական գործունեության ընթացքում կարողանում են դրսևորել համբերատարություն:Հարցադրումները հնչեցնելուց հետո սովորողներին տան դադարի ժամանակ,հանդուրժողաբար լսեն նրան՝ սեփական կարծիքվ ուղղորդելու: Հաճախ պատահում է,երբ մի քանի տասնյակ սովորողների ցուցադրվում է մի պատկեր,իսկ հարցի պատասխանն ակնհայտ գրված է լինում հենց պատկերի վրա,սակայն տևական ժամանակ նրանցից որևէ մեկը չի նկատում այդ բաղադրիչը,միայն տրամադրված ժամանակի վերջին պահին նրանցից մեկը վերջապես նկատում է այն: Այսպիսի պահերը մեծ բավականություն են պատճառում սովորողներին:Եվ շատ կարևոր է որ,այստեղ վերահսկող,խիստ ուսուցչի դերը փոխարինվում է համբերատար ուսուցչի կերպարով,ում համար կարևորագույնը աշակերտների ինքնուրույնությունն է և ակնհայտ հանգամանքներում ինքնուրույն հարցի պատասխանները գտնելը:

Գլուխ 3

Պատմության ուսուցման մի քանի ռազմավարական հնարները և դրանց կիրառությունը

«Մեկ երեխա, մեկ ուսուցիչ, մեկ գիրք, մեկ գրիչ կարող են փոխել աշխարհը»:

Մալալա Յուսաֆզայ

Ներկայումս ՀՀ հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են նախկին ուսուցչակենտրոն համակարգի փոխարեն աշակերտակենտրոն ուսուցման համակարգի ներդրմանը: Այս անցումը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում, ուսուցման նորարարական տեխնոլոգիաների կիրառում: Ուսուցման նորարարական տեխնոլոգիաները կազմում են փոխկապակցված տեխնոլոգիաների համակարգ, որոնք ուղղված են յուրաքանչյուր աշակերտի անհատական ընդունակությունների դրսևորմանը՝ դասերի ընթացքում ուսուցիչ-աշակերտ հավասարազոր գործընկերության իրականացման միջոցով: Նորարարական մեթոդները օգնում են նաև արդյունավետ դասավանդմանը: Հայոց և համաշխարհային պատմություն առարկաների դասավանդման բնագավառում նորագույն մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս ավելի հանգամանորեն վերլուծելու պատմական իրադարձություններն ու երևույթները, նպաստում է պատճառահետևանքային կապերի վերլուծությանը, սովորողների հետաքրքրության աճին, ապահովում է նրանց ներգրավվածությունը դասապրոցեսին, ստեղծագործական մտածողության և մտքերն ազատ արտահայտելու հմտության զարգացմանը և այլն : Այդ մեթոդներից ես հատկապես կառանձնացնեի «Պատմական հիշողության օղակներ», «Պատմական փոփոխությունների շրջանի աղյուսակ», «Հնգյակ», «Ապագայի անիվ», «Վեննի դիագրամ» ,«Քարտեզագրում» մեթոդները, որոնք նպաստում են վերլուծական մտքի զարգացմանը, սեփական կարծիք ձևավորելուն, սեփական մտքերը գրագետ շարադրելու հմտությունների և ունակությունների ձևավորմանը և,

ամենակարևորը, հնարավորություն են տալիս ավելի հիմնավոր յուրացնելու ուսումնական նյութը:[5]

Այսպես, «Ապագայի անիվ» մեթոդի միջոցով աշակերտները կարողանում են առանձնացնել որևէ պատմական իրադարձության պատճառներն ու հետևանքները ։ Օրինակ՝ «Ռազմաքաղաքական նոր իրադրությունը Առաջավոր Ասիայում;Հայ-հռոմեական պատերազմը» թեման 10-րդ դասարանում/ 6-րդդասարան-հիմնական դպրոցում/ ուսուցանելիս դասը սկսում եմ մտագրոհով: Գրատախտակին գրում եմ «Պատերազմ» բառը ուղղահայաց դիրքով: Աշակերտները այդ բառի յուրաքանչյուր տառով առաջարկում են պատերազմը բնորոշող բառեր կամ արտահայտություններ՝ Պ – պայթյուն, պարտվել, պաշարել Պ – 279 – Ա- աղետ Տ – տանկեր,տերություններ Ե-երկպառակտություն Ր-բոպեներ Ա –արշավանք,ավար Զ –զոհեր, զենքեր Մ –մահ, մարտադաշտ: Ցանկության կամ հնարավորության դեպքում կազմում են աքրոստիկոսներ: Իմաստի ընկալման փուլում կարճ դասախոսությունից հետո դասարանը բաժանում եմ չորս համագործակցային խմբերի, յուրաքանչյուրը բաղկացած4- 5 աշակերտներից: Խմբերին հանձնարարում եմ կարդալ դասը և տետրում գրել պատերազմի պատճառները և առիթը,ճակատամարտերը,արդյունքները (10-15բոպեների սահմաններում): Այնուհետև խմբերը ներկայացնում են իրենց գրառումները: Ամբողջ դասարանով քննարկում ենք և ընդհանրացնում պատերազմի առիթը, պատճառները, գլխավոր ճակատամարտերը: Դասի կշռադատման փուլում «Ապագայի անիվ» մեթոդի միջոցով դասարանի հետ վեր ենք հանում պատերազմի պատճառահետևանքային կապը:Նույն մարտավարությամբ իրականացրել եմ <<Հայոց թագավորությունները Ք. ա. 331-201թթ. >> թեման ուսումնասիրելիս: Աշակերտները խթանման փուլում մտագրոհ իրականացրել են <<Արշավանք>> բառի շուրջ,այնուհետև իմաստի ընկալման փուլում հարցերի միջոցով վեր են հանել ինչ գիտեն Ա. Մակեդոնացու և հելլենիզմի մասին՝ գնահատելով նրա դերը հայ և համաշխարհային պատմության, քաղաքակրթության մեջ և ամփոփել են Մակեդոնացու արշավանքների և հելլենիստական մշակույթի տարածման հետևանքները գնահատելով /Անդրադարձ/: Դասավանդման գործընթացում շատ կարևոր է նաև համագործակցային ուսուցումը, որը դասավանդման մեջ բազմազանություն է մտցնում և գործուն ու արդյունավետ ուսումնառության հնարավորություն է ընձեռում: Աշակերտները տարբեր են. կան աշակերտներ, որոնք արագ են ըմբռնում նյութը, ուսուցչի բացատրությունը, կան նաև այնպիսի աշակերտներ, որոնց ժամանակ է պետք յուրացնելու նյութը, լրացուցիչ բացատրություն ստանալու: Որպես կանոն՝ այդպիսի աշակերտները վախենում են արտահայտվելուց, հարցեր տալուց: Նման դեպքերում երեխաներին միավորում եմ համագործակցային խմբերում (3-5հոգի) և տալիս եմ նրանց ընդհանուր հանձնարարություն: Այնպիսի իրավիճակ է ստեղծվում, որ յուրաքանչյուրը պատասխանատու է ոչ միայն իր աշխատանքի համար, այլ ամբողջ խմբի համար: Թույլ աշակերտները աշխատում են ստանալ իրենց համար անհասկանալի հարցերի պատասխանները

[5] <<ԴԱՍԱՎԱՆԴԱՆ ՍՈՑԻԱԼԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՌՈՍՑՄԱՆ ՄՈԴԱՅՈՒՅՆ ՍԵԹՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ>>- / Միվսիսյ ան Հռիփսիմե

ընկերներից: Խմբի բոլոր անդամները շահագրգռված են, որ բոլորը ըմբռնեն նյութը և կարողանան այն լավ ներկայացնել: Այդ ճանապարհով, միասնական ուժերով պրոբլեմը լուծվում է: Աշակերտները համագործակցում են և պարտավորված են զգում իրենց ընկերների ուսումնառության համար: Յուրաքանչյուր խումբ կամ զույգ աշխատում է միասնական, համախմբված, մի մարդու նման՝ ուսուցչի կողմից իրենց տրված հանձնարարությունը կատարելու նպատակով: 9-րդ դասարանում «Լեռնային Ղարաբաղ» թեման ամփոփելիս օգտագործել եմ խմբային հետազոտման մեթոդը: Նախապես դասարանը ըստ նախասիրությունների բաժանում եմ հինգ համագործակցային խմբերի՝ (յուրաքանչյուր խմբում հինգ աշակերտ)՝ աշխարհագրագետներ, պատմաբաններ (2 խումբ), տնտեսագետներ, հնագետ- ճարտարապետներ: Խմբերին տրվել է հետևյալ հանձնարարությունները. Առաջին խումբ՝ աշխարհագրագետներ- ուսումնասիրել և ներկայացնել ԼՂՀ-ի տարածքը, աշխարհագրական դիրքը, սահմանները, գետերը, լճերը և քաղաքները: Երկրորդ խումբ՝ պատմաբանների 1-ին ենթախումբ - ուսումնասիրել և ներկայացնել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը 1921թվականին: Երրորդ խումբ՝ պատմաբանների 2-րդ ենթախումբ - ուսումնասիրել և ներկայացնել Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակման և պետականության ձևավորման հետ կապված իրադարձությունները, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության, պատերազմական գործողությունների ծավալումը: Չորրորդ խումբ՝ տնտեսագետներ- ներկայացնել ԼՂՀ-ի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Հինգերորդ խումբ՝ հնագետ-ճարտարապետներ- ուսումնասիրել և ներկայացնել ԼՂՀ-ի պատմաճարտարապետական հուշարձանները: Հաջորդ ժամին խմբերը ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքը տվյալ հարցերի շուրջ: Դասի կշռադատման փուլում կատարվեց դասի ամփոփում «Պատմական հիշողության օղակներ» մեթոդով՝ համաձայն հետևյալ սխեմայի.

Կենտրոնում փաստ-5 օղակներ շուրջը՝հիմնախնիր-լուծումներ-փոփոխություններ-արդյունքներ:

Խմբերը գնահատվեցին ռուբրիկի միջոցով.

Չափանիշ՝ 1-ին խումբ 2-րդ խումբ 3-րդ խումբ 4-րդ խումբ 5-րդ խումբ/ 1. Խմբի կազմակերպվածությունը, 2. Հանձնարարության ճիշտ և հստակ ներկայացնելը ,3. Ներկայացման ոճը, 4. Օրինակների, փաստերի օգտագործումը 5. Շնորհանդեսի առկայությունը: Յուրաքանչյուր չափանիշ գնահատվում է առավելագույնը 2 միավոր:

Այս մեթոդը արդյունավետ կիրառվում է նաև համաշխարհային պատմության դասընթացում տարբեր երկրների պատմությունը առանձին-առանձին ուսումնասիրման ժամանակ:

Համագործակցային ուսուցման առավելություններից է նաև, որ այն լուծում է մի շարք դաստիարակչական, սոցիալական խնդիրներ, աշակերտների մեջ դաստիարարկում է ինքնավստահություն, պատասխանատվություն, քննադատության և ինքնաքննադատության ունակություններ, հանդուրժողականություն, ներողամտություն: Համագործակցային ուսուցման ընթացքում աշակերտը սովորում է օբյեկտիվորեն գնահատել իր և իր ընկերների գիտելիքները, հաշվի առնել խմբի մյուս անդամների կարծիքները, ինչու չէ, նաև կարևորել սեփական անձը:

Կիրառվող մեթոդները թույլ են տալիս բարձրացնել դասապրոցեսի արդյունավետությունը և այն հնարավորինս համապատասխանեցնել պետական կրթական չափորոշիչների պահանջներին: Կայուն գիտելիքներից բացի, նորարարական մեթոդների կիրառումը նպաստում է աշակերտների մոտ մի շարք կոմպետենցիաների ձևավորմանը՝ դաստիարակելով կոլեկտիվում աշխատելու ունակություն, հանդուրժողականություն, հարգանք ուրիշի կարծիքի նկատմամբ, ինքնավստահություն և այլն: [6]

Նորարական մեթոդները ուսումնասիրելիս աչքի զարնվեց **կերպարային քարտեր** մանկավարժական ռազմավարական մեթոդը,որի կիրառումը նպաստում է պատմական կարևոր իրադարձությունները ՝ներսից՝ տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար:Քարտը ներկայացնում է իրադարձության /ժամանակահատվածի/ կերպարների մտադրությունները,հուզական վիճակները, տեսանկյունները,գաղափարները, կարծիքները և այլն:Կերպարային քարտը խթանում է պատմական ակտիվ մտածողության տարատեսակ հարցադրումների քննարկմանը:[7]

Հայդուկային շարժումից կերպարային քարտի օրինակ՝	
	
1.1980-ական թթ մեծ ժողովրդականություն ձեռք բերած ֆիդայապետ	2.1980-ական թթ. մեծ ժողովրդավարություն ձեռք բերած ֆդայապետի՝ Աղբյուր Սերոբի կինը:
Դու ժողովրդի սիրելի հայդուկապետ Աղբյուր Սերոբն ես:Նախքան Ավե դավաճանությունը հանդիպում ես ժողովրդի հետ և ի՞նչ	Դու ժողովրդի սիրելի կին ֆիդային ես:Զարդերի ժամանակ ի՞նչ էիր անում դու:Ինչու: Պըշարեր Խալիլը չսպանեց քեզ:Քո կեցվածքն ու գործը որքա՞ն

[6] Կաթու ցողական կրթությանհիմունքները և մեթոդները: Ձեռնարկ ուսուցիչների համար, Այ ռեքս, 2004

[7] Գիրք պատմության ուսուցման,«Պարադիգմա»կ/հ 2020թ./:

կոչով ես հանդես գալիս:Ի՞նչ ես կարծում,ինչպե՞ս կփաստես հայդուկային շարժման անհրաժեշտությունը և որքա՞նով կկարևորես ինքնապաշտպանական մարտերի դերը հայ ժողովրդի կյանքում և որքանո՞վ է կարևոր հայի միասնական ոգին:	ընդունված և ընդհանրական էր այդ օրերին

Նմանատիպ է <<Դերային խաղ>> մեթոդը, որը բազմիցս կիրառել եմ դասերի և տարբեր միջոցառումների ժամանակ, օրինակ՝ <<Վանի համահայկան թագավորություն>>-ամփոփիչ դաս 10-րդ դասարանում,/դասի պլանը ներկայացված է հավելված բաժնում/ <<Արտաշեսյաններ>> դաս-միջոցառում,<<Սարդարապատից-Արցախ>>՝միջոցառում նվիրված մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի 1-ին հանրապետության 100-ամյակին, 6-րդ դասարան <<Թագավորն ու չարչին>>բալլադի բեմադրում 7-րդ դասարանում՝ապահովելով միջառարկայան կապը <<Հայ գրականության>> հետ,:

Աշակերտների ինքնուրույն աշխատանքի ուղղորդելու լավագույն մեթոդներից է՝**<u>Սովորողները՝ որպես ուսուցիչ</u>**՝ մեթոդը:Այս մեթոդը հաճախակի կիրառում եմ տարբեր դասարաններում:Այն արդյունավետ է գրեթե բոլոր տարիքային խմբերում:Սովորողներին պարբերաբար առաջարկում եմ կազմակերպել ՝փոքր դաս՝:Այսինքն աշակերտները ոչ թե որևէ թեմա են պատմում դասընկերներին,այլև ստիպված են լինում նախ հանգամանորեն ուսումնասիրել տրված նյութը,այնուհետև ներկայացնել դասարանին:Այս ռազմավարությունը զարգացնում է վերլուծելու,վերլուծումը ներկայացնելու և բացատրելու հմտությունները: Մեթոդը հատկապես արդյունավետ է դառնում հենց դպրոցում կազմակերպվող <<ինքնավարության օրերին>>, երբ <<ուսուցիչները>> նախօրոք ընտրվում են ցանկությամբ , ուսուցչի օգնությամբ կազմում են օրվա դասի պլան և նախապատրաստված համապատասխան դասաժամին վարում են դասը, իսկ ուսուցիչները և <<տնօրենության ներկայացուցիչները>> դասալսում են կատարում: Ուսուցիչը այս դասերին հանդես է գալիս միայն ունկնդրողի դերում:

Հաճախ ուսուցիչը դասի բովանդակությունը ծավալուն,բովանդակային առումով բարդ համարելով դասին հատկացնում է երկու ժամ:Սակայն նույն թեման երկու ժամ անընդմեջ կրկնելը կամ զուտ տարեթվերը,գործող անձանց քննակելով չի ստացվում գրավել աշակերտների ուշադրությունը և նրանց ընդգրկել բուն դասապրոցեսին:Բայց երբ դասին զումարվում է մի փոքր հումորային,սակայն բովամդակության առումով խորը առաջադրանք,ապա այն նպաստում է ոգևորել աշակերտներին և նրանց ընդգրկել դասընթացին:Այդպիսի ռազմավարական հնարներից է ***'Պատմական ծաղրանկարի ստեղծումը,'***որը արդյունավետ միջոց է պատմական համատեքստն ավելի խորը հասկանալու,վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ զարգացնելու համար,որը կատարելու ընթացքում աշակերտը իրեն դրսևորում է որպես ակտիվ քննիչ,հետազոտող,կարծիք արտահայտող:Նա իր ստեղծած ծաղրանկարի միջոցով արտահայտում է իր դրական կամ բացասական դիրքորոշումները թեմայի կամ տվյալ նյութի շուրջ:Եվ այսպես,ռազմավարական այս հնարը կիրառելու համար նախ և առաջ հարկավոր է.

- սովորողների հետ քննարկել,ուսումնասիրելծաղրանկարներ,որպեսզի վերջիններս հասկանան,թե ինչպիսիօ սիմվոլներ և ուղերձներ են պարունակում ծաղրանկարները և ի՞նչ ոճով են ստեղծված,այնուհետև ուսուցիչը ընտրում է իրադարձությունը կամ ժամանակահատվածը,որը արտացոլվելու է ծաղրանկարում,
- սովորողները պետք է ազատ լինեն ամբողջ իրադարձությունից կամ ժամանակահատվածից առանձնացնելու նախընտրելի համատեքստը
- սովորողները պետք է կարողանանա բացատրել,թե իրենց պատկերացմամբ ինչպիսի՞ ուղերձ ունի իրեն ներկայացրած ծաղրանկարը:

Պատմություն առարկան անմիջական կապ ունի աշխարհագրության,Հայաստանի աշխարհագրության հետ և յուրաքանչյուր պատմության դասաժամ ավելի տեսանելի է դառնում,երբ պատմության դասաժամին կիրառվում է քարտեզ:Քարտեզի միջոցով աշակերտը շրջագայում է պատմության բոլոր փուլերում ստեղծված աշխարհներով և էլ ավելի լավ է պատկերցնում աշխարհաստեղծման գործընթացը:Բավականին հաջողված ռազմավարություն է ***'քարտեզային քննարկումը,'***որը կարելի է կիրառել 5-12-րդ դասարաններում՝ ըստ սովորողների իմացության և պահանջների: Աշխատանքը սկսելու համար նախ և առաջ անհրաժեշտ է.

- ✓ ընտրել պատմական որևէ իրադարձություն կամ ժամանակամիջոց,որը ուսումնասիրում եք տվյալ դասաժամին,
- ✓ այնուհետև ինքնուրույն,կամ ուսուցչի օժանդակությամբ պետք է ստանալ տվյալ իրադարձության,ժամանակամիջոցի պատմական փոփոխության նկարագրությունը աշխարհագրական քարտեզի վրա:,
- ✓ տեղանշումներ կատարել քարտեզի վրա,ինչը կարելի է կատարել էլ ավելի հետաքրքիր և ժամանակակից միջոցի օգնությամբ /օրինակ՝ Google Earth-ի/:

Դասապրոցեսը ճշգրիտ և հետաքրքիր դարձնելու համարանհրաժեշտ է,որ ուսուցիչը նախապես աշակերտներին տրամադրի .

- ➢ պատմական աղբյուրներ,որը կնպաստի ճիշտ կետից նախապատրաստվելուն
- ➢ արխիվային լուսանկարներ ճշգրիտ պատկեր ստանալու նպատակով:

Այս ռազմավարությունը կարելի է կիրառել.

- ❖ ժամանակամիջոցի նկարագրության քարտեզային քննարկում-վերլուծության ժամանակ
- ❖ երբ քննարկում-վերլուծություն է իրականացվում տարածքային փոփոխությունների շուրջ
- ❖ երբ կատարվում է քարտեզի միջոցով ողևորության վերլուծություն/օրինակ՝ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները ուսումնասիրելիս/,
- ❖ գաղափարների, շարժումների, աղետների տարածման քննարկում վերլուծություն անցկացնելիս/օրինակ Պավլիկյան Հայաստանում և դրա տարածումը[8]

Այս ռազմավարությունը իր բազմազան ճյուղերով կիրառել եմ պատմության դասաժամերին տարբեր դասարաններում,որոնք շատ մեծ աշխուժություն և ոգևորություն են առաջացրել աշակերտների շրջանում:Ռազմավարությունը մեծ ոգևորությամբ ընդունվեց թե թղթային տարբերակով կատարելիս,թե էլեկտրոնային:Այս մեթոդը նպաստում է ոչ միայն

[8] Գիրք պատմության ուսուցման,«Պարադիգմա»կ/հ 2020թ./:

պատմությունը քարտեզներով հասկանալուն,այլ նաև օժանդակում է <<աշխարհագրություն>> առարկային՝ ապահովելով միջառարկայան կապեր:

Պատմության ուսուցումը կարող ենք հարստացնել նաև դասին զուգահեռ խաղերով ՝օրինակ <<ճիշտ պատասխանի գուշակում>> մեթոդով, <<Quizziz>>կրթական օնլայն գործիքի կիրառումով կամ power point ծրագրով խաղ-վիկտորինաների ստեղծումով:

Առաջին մեթոդը կիրառման օրինակ է կերպարի բացահայտումը, որ իրակացրել եմ 11-րդ դասարանում Սողոմոն Թեհլերյանին <<բացահայտելու>> համար;/ Գիրք պատմության ուսուցման,՝Պարադիգմա՝կ/հ 2020թ. էջ 73

Ահա հնարավոր 5 հուշում բացահայտման համար, որոնք ներկայացրել եմ դասարանին

-Նա ծնվել է Արևմտյան Հայաստանում, Բագառիճում, որտեղ նախնական կրթություն է ստացել, ապա ուսումը շարունակել է Երզնկայի <<Կեդրոնական >>ուսումնարանում

-Նա մասնակցել է հայ քաղաքական կուսակցություններից մեկի նախաձեռնած մի գործողությանը, որի անվանումը հունական ծագում ունի

-Գործողությունը տեղի է ունեցել եվրոպական երկրում

-Նա ձերբակալվեց, սակայն դատարանը նրան չդատապարտեց

-Դատից հետո նա ապրել է Եվրոպայում, Աֆրիկայում, ապա մահացել Ամերիկա աշխարհամասի պետություններից մեկում:

Ինչպես տեսնում եք դասի արդյունավետության բարձրացման համար ռազմավարությունները շատ են և դրանք բոլորը մեկ հետազոտական աշխատանքի ընթացքում բնականաբար հնարավոր չէ ներկաացնել:

Գլուխ 4. Հարցում աշակերտներին դասի ակտիվ ու նորարական մեթոդների և հնարների վերաբերյալ

Ժամանակակից դասավանդման մեթոդները բազմազան են և հետաքրքրական: Սակայն մեթոդները հետաքրքիր և ոգևորող են թվում,երբ կարդում ես,մտածում,պատկերացնում դրա գործարկման տեսքը,ընթացքը և արդյունքները:Հաճախ դասաժամին կիրառելիս ակնհայտ աշխուժությունից կամ աշակերտենրի արձագանքից թվում է,որ հասել ես նախատեսած վերջնարդյունններին:Ուսուցիչը ամեն վայրկյան աշխատում է ստեղծել ամենամատչելի,ամենահետաքրքրական և արդյունավետ մեթոդը դասաժամը ճիշտ և որակյալ կազմակերպելու համար:Ուսուցիչը ճանաչում է իր յուրաքանչյուր աշակերտին և գիտի նրա հետաքրքրության մտահորիզոնը և միշտ փորձում է աշխատել այնպես,որ կարողանա թափանցել այդ հորիզոնի շրջանակները և գրավել աշակերտին՝ հարստացնելով նրա գիտելիքների պաշարը:Սակայն նույնիսկ երկու հոգանոց դասարաններում աշակերտները գտնվում են տարբեր պատրաստվածության մակարդակներում և ունենում են տարբեր հետաքրքրություններ և ուսուցիչը աշխատում է իր ուժերի գերլաված պայմաններում,որպեսզի իր մատուցած դասը հասու լինի յուրքանչյուրին: Վերոնշյալ ռազմավարական հնարները բազմիցս կիրառել եմ տարբեր դասարաններում և տարբեր դասերի ժամանակ,ըստ իս եղել են արդյունավետ և հետաքրքրական,սակայն էլ ավելի համոզվելու համար որոշեցի հարցում իրականցնել աշակերտների շրջանակում/google forms-ի միջոցով / մեկ դասարան/:Աշակերտները պետք է պատասխանեին,թե տվյալ դասին կիրառված մեթոդներից որոնք են առավել արդյունավետ և որքանով են հասկացել ու յուրացրել դասը:, Հարցաթերթի հղումը ստորև՝

https://docs.google.com/forms/d/1O3vf9YX-hSDBw4p6fwxpQ4Znkw3pBF2hsP87gl5Wgkc/edit?fbclid=IwAR0xFc2L0ScxnFuRxbS1YDN7i5SBYblaTxisOLGoegdJoEUh-PbNHfurpjs

Եզրակացություն

Մեթոդների իմացությունը բնութագրում է,թե ինչպես պետք է դասը կազմակերպել: Ուսուցչի սրբազան պարտականությունն է սովորեցնել,սովորել սովորեցնել և սովորեցնելուն զուգահեռ անընդհատ սովորել,քանզի մարդկության երջանկությունը կառուցվում է նաև գիտելիքների վրա:Եվ եթե ժամանակակից դպրոցը կառուցված է աշակերտահեն գաղափարախոսության վրա,ապա թե ժամանակակից աշխարհում,և թե մարդկության ծնունդից ի վեր աշխարհը եղել է գիտելիքահեն.խելացիները կառավարել են հիմարներին:Աշակերտահեն դպրոցում հնարավոր է հասնել արդյունավետության այն ժամանակ,երբ ուսուցիչը դուրս կգա կաղապարված ավանդական դասավանդման մեթոդներից և ամեն օր կկիրառի նորը այնպես,որ աշակերտը ուսուցչին կդիտարկի որպես սպասված հրաշագործի,որը դասը վեր է ածում գիտելիքներով հարստացրած նկարի,և ամեն օր այդ նկարը ստանում է նոր գույներ և տեսք: Բազմազան և նորարարական մեթոդներից ուսուցիչը պետք է կարողանա ընտրել այն մեկը,որը հաճելի կլինի աշակերտներ՝գիտելիքային,փորձարարական ճաշակին՝: Մատուցման ձևերը ընտրելիս պետք է անընդհատ ուսումնասիրի այն աշակերտներին,որոնց հետ աշխատում է թե ամեն օր,թե երբեմն-երբեմն:Հաճախակի կազմակերպի քննարկումներ կամ անցկացնի հարցումներ աշակերտների շրջանում հասկանալու համար իր կիրառած մեթոդների արդյունավետությունը:Ինչո՞ւ չէ,ուսուցիչը հաճախակի պետք է իր կիրառած մեթոդները քննարկի և իր համադպրոցական գոծընկերների հետ,և միջդպրոցական գործընկերների: Ժամանակակից դարաշրջանում մեթոդների նորարարության շուրջ քննարկումներ կարելի կազմակերպել արտասահմանյան գործընկերների հետ,վերցնելով նրանցից լավագույնը,կամ փոխանցելով քո իսկ ստեղծած արդյունավետը:Կարելի է նույնիսկ խորհրդատվություն ստանալ հայտնի մանկավարժական մեթոդաբանների հետ,և ի վերջո կարելի է աշխատել ամեն մի նոր աշակերտի՝ ուսումնական պահանջի՝ շուրջ և քեզ համար ստեղծել քո՝ինչպե՞ս դասավանդել՝հարցի պատասխանը:Եվ ինչպես ասում է *Պ. Լապլասը.*

՝Այն, ինչ մենք գիտենք՝սահմանափակ է, իսկ այն, ինչ մենք չգիտենք, անվերջանա լի է:՝և մենք մեր չիմացության որոնման արդյունքում պետք է հասնենք նրան,որ աշակերտը հավատա, որ անհասկանալին կարելի է հասկանալ, այլապես նա չէր սկսի մտորել անհասկանալիի մասին

Հավելված

Դասի պլան

24.01.2019թ.

Առարկան ՝ Համաշխարհային պատմություն

Դասարան ՝ 10-րդ /ա/ հումանիտար հոսք

Գլուխ 7. Քաղաքակրթությունների խաչմերուկում

Բաժին Դ. Հին աշխարհի ավարտը; Դաս 1. Հելլենիստական աշխարհը

Նպատակները ՝ / Աշակերտը պետք է /

Իմանա՝

- Մակեդոնիայի կողմից Հունաստանի նվաճման նախադրյալները
- Ով է Ալ. Մակեդոնացին և ինչ դեր ունի հայ ու համաշխարհային պատմության ու մշակույթի մեջ
- Համառոտ ներկայացնել Ալ. Մակեդոնացու արևելյան արշավանքը՝ թվարկելով կարևոր ճակատամարտերը
- Թվարկել հելլենիստական պետությունները
- Բացատրել՝<<հելլենիզմ>> հասկացությունը,

Կարողանա ՝

- Ներկայացնել և բացատրել Մակեդոնիայի հզորացման պատճառները:
- Լուսաբանել Ա. Մակեդոնացու արևելյան արշավանքը և դրա արդյունքները:
- Պարզաբանել հելլենիզմին բնորոշ գծերը, համեմատել ժամանակակից մշակույթի հետ

Խնդիրները

Դաստիարակչական բաղադրիչ՝հայրենիքի պաշտպանելու ու հզորացնելու կարևորությունը: Ա. Մակեդոնացու դրական ու բացասական հատկանիշների բացահայտում:

- Կիրառված մեթոդների միջոցով հասնել դասի նպատակներին:
- Անհատական և խմբային աշխատանքների կատարման հմտությունների ձևավորում և զարգացում

Կիրառվող մեթոդներ, միջոցներ, հնարներ ՝ Մտագրոհ, էլեկտրոնային թեստ / smart-notebook/ ծրագրով, դասախոսություն, քառաբաժան աղյուսակ:

Միջառարկայական կապը՝ Գրականություն, Հասարակագիտություն, հայոց պատմություն՝<<Հայոց թագավորությունները Ք. ա. 331-201թթ. >>:

Ներառարկայական կապը՝ կապը նախորդ դասերի հետ՝<<Քաղաքակրթությունների կազմավորումը Արևմուտքում>> բաժին, <<Հին Հունաստան>>:

Դասի տիպը՝ նոր նյութի յուրացման դաս:

Ուսումնական նյութերը՝ Գրատախտակ, էլ. գրատախտակ ,քարտեզ կավիճ, տետրեր,դասագիրք, գրիչներ, գնահատման թերթիներ:

Հիմնական հասկացություններ, անուններ, տերմիններ՝ Փիլիպոս 2-րդ, Քերոնիայի ճակատամարտ, Կորնթոսի համահունական վեհաժողով, Գրանիկոս գետի ճակատամարտ, Իսոսի ճակատամարտ, Գավգամելայի ճակատամարտ, Բակտրիա, Սողդիանա, դիադոքոս, Պերդիկա, Անտիպատրոս, Կրատերոս, Լիսիմարքոս, Անտիգոնոս, Էվմենես, Պտղոմեոս,Սելևկոս, հելլենիզմ, մուսեյոն:

Դասի կազմակերպական մաս՝ /2-3 րոպե/

- Դասամատյանի լրացում
- Աշակերտների հաշվառում

Դասի ընթացքը;

ներածական մաս / խթանում/ ՝ 10-15րոպե

- Մտագրոհ <<Ալեքսանդր Մակեդոնացի>> անվան շուրջ; Աշակերտները թվարկում են այն ինչ գիտեն Ա. Մակեդոնացու և հելլենիստական աշխարհի մասին: Գրառում էլ. գրատախտակին
- Նախաթեստ-Աշակերտները պատասխանում են էլեկտրոնային թեստի հարցերին, պատասխանները տեղում ստուգվում են:

Հիմնական մաս/ իմաստի ընկալում/ 15-20րոպե

- Տեսաֆիլմի դիտում- Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները;
- Զրույց-դասախոսություն-Հելլենիստական պետությունները և հելլենիզմը:
- Կապը հայո պատմության նույն դարաշրջանի հետ՝ քննարկման միջոցով վեր ենք հանում Ալ. Մակեդոնացու և հելլենիզմի դերն ու ազդեցությունը Հայ ժողովրդի ու հայոց պատմության ու մշակույթի կյանքում:
- Հետթեստ-պատասխանում են էլեկտրոնային թեստի մնացած հարցերին:

Ավարտական մաս/կշռադատման փուլ /7-10 րոպե

- Աշակերտները խմբերով լրացնում են քառաբաժան աղյուսակը

Գիտեի. . .	Սովորեցի. . .
Հետաքրքիր էր. . .	Անհասկանալի էր. . . կամ կուզենայի իմանալ

- Ինքնագնահատում
- Տնային առաջադրանք –Դասը պատմել էջ 118-121, գրել լրացուցիչ տեղեկություն կամ սեփական կարծիք Ալ. Մակեդոնացու մասին:

- <<Պատմական հիշողությունների հինգ օղակներ>>-ի միջոցով՝ Սևրի պայմանագրի առանձնահատկություններ



դասի պլան

19. 04. 2022թ.

Առարկան ՝ Հայոց պատմություն

Դասարան ՝ 11-րդ /Ե/

Գլուխ2՝ Հանրապետության միջազգային դրությունը ;Հայկական հարցը

Դաս2՝ Հայկական հարցը Փարիզի խորհրդաժողովում;Սևրի պայմանագիրը

Նպատակները ՝ / Աշակերտը խետք է /

- Իմանա Փարիզի խորհրդաժողովի հրավիրկան պատճառները և նպատակը, հայկական 2 պատվիրակությունների գործունեությունը
- Նկարագրել Սան-ռեմոյի կոնֆերանսը, Հայաստանի մանդատի հարցը
- Ներկայացնել և գնահատել Սևրի պայմանագիրը
  Խնդիրները
- Կիրառված մեթոդների ,միջոցների ու հնարների միջոցով հասնել դասի նպատակներին։
- Ընդլայնել գիտելիքները թեմայի վերաբերյալ։
- Անհատական և խմբային աշխատանքների կատարման հմտությունների ձևավորում և զարգացում

Արժեքային համակարգ / դաստիարակչական բաղադրիչ/՝ -Աշակերտների մոտ ձևավորել հայրենասիրություն, ազգային արժանապատվության զգացում։

Կիրառվող մեթոդներ, միջոցներ, հնարներ ՝ Quizizz խաղ-վիկտորինա,զրույց-դասախոսություն,սահիկահանդես,տեսանյութ, <<Պատմական հիշողությունների հինգ օղակներ>> ։

Միջառարկայական կապը՝ համաշխարհային պատմություն,աշխարհագրություն, հասարակագիտություն, ՆԶՊ։

Ներառարկայական կապը՝ կապը նախորդ դասի հետ՝/Հայաստանի 1-ին հանրապետություն, արտաքին կապեր և հարաբերություններ։

Դասի տիպը՝ Խառը, համկցված դաս

Ուսումնական նյութերը՝ համակարգիչ,տեսացրիչ, գրատախտակ,կավիճ, տետրեր,դասագիրք, գրիչներ, <<Հայոց պատմության ատլաս >>Գմաս։

Հիմնական հասկացություններ, անուններ, տերմիններ՝ ՓարիզիԿոնֆերանս, <<Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ>>, Ավ. Ահարոնյան,Պողոս Նուբար փաշա,Սան Ռեմոյի կոնֆերանս, Վուդրո Վիլսոն, արբիտր (իրավարար), մանդատ, Սևրի պայմանագիր;

Դասի կազմակերպական մաս՝/2-3 րոպե/

- Ողջույնի խոսք
- Աշակերտների հաշվառում
- Դասահարցում

Դասի ընթացքը;

ներածական մաս / խթանում/ ՝ 5-7րոպե

- Մտագրոհի միջոցով անդրադառնալ առաջին աշխարհամարտի ավարտական փուլին:
  Հիմնական մաս/ իմաստի ընկալում/ 25-30/րոպե
- Quizizz խաղ-վիկտորինա-անցած նյութի ամփոփում
- Համառոտ դասախոսությամբ և սահիկահանդեսի միջոցով նոր նյութի ուսուցանում,քարտեզի ուսումնասիրում
  Տեսանյութի դիտում և քննարկում

Ավարտական մաս/կշռադատման փուլ /5-7 րոպե/

- <<Պատմական հիշողությունների հինգ օղակներ>> -մեթոդով դասի ամփոփում

Անուն, ազգանուն, դասարան	Գնահատականը/ինքդ քեզ ՝x, ընկերներիդ ՝o,համապատասխան վանդակում /								
	Շատ վատ	վատ	անբավարար	բավարար	միջին	Միջինից բարձր	լավ	Շատ լավ	գերազանց
Դասին մասնակցել եմ									
Դասը հասկացել եմ									
Մյուսներին բացատրել եմ									
Հարցերին պատասխանել եմ									
Մասնակցել եմ քննարկմանը									

- Գնահատում-ինքնագնահատում

Տնային առաջադրանք՝ Դասը պատմել էջ 197-202

Դասի պլան

19. 10. 2021թ.

Առարկան ՝ Հայոց պատմություն

Դասարան ՝ 10-րդ /գ/ Տնտեսագիտական հոսք

Բաժին 3՝ Համահայկական թագավորությունները

Գլուխ1՝ Վանի համահայկական թագավորությունը

Նպատակները ՝ / Աշակերտը խետք է /

- Ներակայացնել Վանի թագավորության կազմավորումը, տարբեր անվանումները
- Թվարկել և ներկայացնել նշանավոր արքաներին գահակալման տարիներով գործունեությունը, բնութագրել նրանց
- Վեր հանի Վանի թագավորության անկման պատճառները։
- Թվարկի Վանի թագավորության տնտեսության զարգացած ճյուղերը, տնտեսության վերելքին նպաստող նախադրյալները, պետական կառավարման կարգը և բանակը
- Գնահատել Վանի համահայկական առաջին թագավորության դերը Հայոց և համաշխարհային պատմության և քաղաքակրթության մեջ։

Խնդիրները

- Կիրառված մեթոդների ,միջոցների ու հնարների միջոցով հասնել դասի նպատակներին։
- Ընդլայնել գիտելիքները թեմայի վերաբերյալ։
- Անհատական և խմբային աշխատանքների կատարման հմտությունների ձևավորում և զարգացում

Արժեքային համակարգ / դաստիարակչական բաղադրիչ/՝ հանդես գալով 1-ին դեմքով թագավորների անունից, կարողանալ անկեղծ բնութագրել իրենք իրենց /թագավորներին/, վեր հանելով նդրական և բացասական կողմերը։Համեմատի վանի թագավորությունը Ասորեստանի հետ, որպես ավելի քաղաքակիրթ, մարդասեր ժողովուրդ ունեցող թագավորություն։

Կիրառվող մեթոդներ, միջոցներ, հնարներ ՝ խմբային աշխատանք , դերային խաղ,m-աձև աղյուսակ,հարց ու պատասխան,սահիկահանդես,ապագայի անիվ ։

Միջառարկայական կապը՝ համաշխարհային պատմությոն,աշխարհագրություն, հասարակագիտություն, ՆԶՊ։

Ներառարկայական կապը՝ կապը նախորդ դասի հետ՝<<Հայկական լեռնաշխարհ;Հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաաշխարհագրական պայմանները>> ,<<Վաղ պետական կազմավորումները Ք. ա. 3-1-ին հազարամյակի սկիզբ>>։

Դասի տիպը՝ Ամփոփիչ դաս

Ուսումնական նյութերը՝ Էլեկտրոնային գրատախտակ,շարժողական գրատախտակ, կավիճ, թղթեր, տետրեր,դասագիրք, գրիչներ,նկարներ,<<Հայոց պատմության ատլաս >>Ա մաս , համակարգիչ, թագավորական թագ ու թիկնոց։

Հիմնական հասկացություններ, անուններ, տերմիններ՝ Համադաշնություն, Էթիունի, Դիաուխի, Նաիրի, համահայկական թագավորությունմ Վան/ Տուշպա, Տոսպ/, Սարդուրի 1-ին, Ուրարտու, Ասորեստան, Բիայնիլի, Արարատյան թագավորություն, Իշպուինի, միասնական պանթեոն, <<Խալդյան դարպաս>>, <<Միերի դուռ>>, դաշնային աշխարհազոր, արհեստավարժ կանոնավոր բանակ, Արդինի –Մուսասիր երկիր, Մենուայի ջրանցք, Մենուախինիլի քաղաք, Մելիտեա/ Մելիդ, Մալաթիա/, Մանայի թագավորութուն, գերտերություն, Արգիշթի 1, Էրեբունի ամրոց, Պարսուա, Բաբելոն, Արգիշթիխինիլի, Վանի աշխարհակալություն, Առաջավոր Ասիա, Սարդուրի 2, կենտրոնացված պետություն, Թիգլաթպալասար 3, Սարգոն 2, կիմմերեր, Սկյութներ, Կապադովկիա/ Գամիրք, Ռուսա 1. Ռուսա 2, Սարդուրի 3, Էրիմենայի որդի Ռուսա 3,Պարույր Հայկազն, Նիկողայոս Ադոնց, Ռուսայի ջրանցք, ստրկական ուժ, Սարդուրիխինիլի, Թեյշեբանի/ Կարմիր բլուր/,<<Աստծո դարպաս>>,բացարձակ միապետություն, պետական կարգ, ավագների խորհուրդ, արքայի <<խորհրդականներ>>,գործակալություններ, <<Սարդուրյան տարեգրություն>><<4 ծովերի թագավորություն>>։

Դասի կազմակերպական մաս՝/2-3 րոպե/

- Ողջույնի խոսք
- Աշակերտների հաշվառում

Դասի ընթացքը;

ներածական մաս / խթանում/ ՝ 5-7րոպե

- Ուսուցչի ներածական խոսք, հարց ու պատասխանով անցածի վերհիշում/ ինչո՞վ ենք մենք հպարտանում <<Հայոց պատմությունը >>-ը ավագ դպրոցում ուսումնասիրելիս և ընդհանրապես/

Հիմնական մաս/ իմաստի ընկալում/ 25-30/րոպե

- Խմբային եղանակով և սահիկահանդեսի ցուցադրմամբ թեմայի ներկայացում /նախօրոք ցանկությամբ ընտրվել էին թագավորները, բաժանվել էին խմբերը և հանձնարարվել առաջադրանքները/ ըհեղինակ-թագավորներ՝ Աշակերտները հանդես են գալիս 1-ին դեմքով և ներկայացնում տվյալ թագավորի գործունեությունը, ժամակաշրջանը և վերջում կազմում իրենց բնութագիրը /։
  Խումբ1-ին –Վանի թաագավորության կազմավորումն ու հզորացումը
  Խումբ2-րդ-Վանի տերությունը Սարդուրի 2-ի և նրա հաջորդների օրոք;Թագավորության անկումը
  Խումբ 3-րդ-Վանի թագավորության տնտեսությունը, պետական կարգը և բանակը
  Ներկայացնելուն զուգահեռ մյուս խմբերի աշակերտները լրացնում են m-աձև
  աղյուսակը;

Թագավորի անումը	Գահակալման տարիները	Գործունեությունը/ շինարարական, բարեփոխումներ, ձեռնարկած արշավանքներ, նվաճումներ

Ավարտական մաս/կշռադատման փուլ /5-7 րոպե/

- Խմբերը ներկայացնում են իրենց տպավորությունները դասից/ ինչը դասից դուր եկավ, ինչը ոչ, ինչ սովորեցիք, ինչն էր անհասկանալի/՞
  Լրացուցիչ/ կամ տնային առաջադրանք
- Անցյալ, ներկա, ապագա/ ապագայի անիվ/ –հնարի կիրառում /Վանի թագավորությունը անցյալում, Վանի թագավորությունը ներկայում(թագավորության գոյության շրջանում /9-7-րդ. դդ. Ք. ա. և իրական ներկայում /21-րդ դար/), Վանի թագավորությունը ապագայում /Վասապուրականի թագավորություն,Արևմտյան Հայաստանում(Թուրքիա)
- Գնահատում-ինքնագնահատում-փոխադարձ գնահատում /յուրաքանչյուրը գնահատում է ինքն իրեն սանդղակով/;

Անուն, ազգանուն, դասարան	Գնահատականը/ինքդ քեզ `x, ընկերներիդ `o,համապատասխան վանդակում /								
	Շատ վատ	վատ	անբավարար	բավարար	միջին	Միջինից բարձր	լավ	Շատ լավ	գերազանց
Դասին մասնակցել եմ									
Դասը հասկացել եմ									
Մյուսներին բացատրել եմ									
Հարցերին պատասխանել եմ									
Մասնակցել եմ քննարկմանը									

Օգտագործված գրականության ցանկ

1. Балаев А.А. Активные методы обучения. М., 2006.
2. Գիրք պատմության ուսուցման,"Պարադիգմա՝ կրթական հիմնադրամ,2020թ.
3. Ա. Ղուկասյան, Հայոց պատմություն, Ուսուցչի ձեռնարկ 8-9.
4. <<Դասավանդման արդյունավետությունը բարձրացնող մեթոդները պատմության դասերին>>/,Մովսիսյան Հռիփսիմե
5. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները: Ձեռնարկ ուսուցիչների համար, Այոեքս, 2004

Էլեկտրոնային պաշար

1. [1] https://hy.wikipedia.org/wiki Ուսուցման ակտիվ մեթոդներ